

ԿԵՍԱՐԱՑԻՆ

Ս. Բարսեղ հայրապետը օր մը կը քալէ ճամբէ մը՝ որոճալով աղօթքներ: Իրեն կը հետեւի սատանան՝ զինքը փորձելու համար: Ս. Բարսեղ կը հանդիպի կարաւանի մը՝ բաղկացած ուղտերով եւ էշերով, բոլոր բեռնաբարձ: Վաճառականները՝ Փղշտացի, Սկովտիացի ու Օվերնիացի, կը ծաղրեն Ս. Բարսեղը ու կ'ըսեն.

-Ապրանք ծախէ՛ փոխանակ սրբութիւն ծախելու:

Ս. Բարսեղ կը սրտմտի:

Փղշտացի մը կ'ըսէ.

-Եթէ իրաւ սուրբ ես, հրաշք մը գործէ տեսնենք:

Ս. Բարսեղ, փրփրած, գաւազանը կը զարնէ կարաւանին:

Ու յանկարծ, հրա՛շք, ահաւոր հրաշք մը:

Մուխ ու փոշի կը բարձրանայ: Բոլոր վաճառականները, ամբողջ կենդանիները, ինչպէս նաեւ ապրանքները՝ խոզի իւղ, եգի, կովու, գոմէշի միսեր, *չաման*, պղպեղ, փղոսկր, քար, մորթ, կաշի, գորգ, կը վերածուին խմորի մը:

Ս. Բարսեղ, անիծելով կարաւանը, կը հեռանայ: Իրեն հետեւող սատանան կը մտնէ խմորին մէջ ու անկէ կը շինէ նոր մարդիկ՝ իր բոցեղէն շունչը փչելով անոնց մէջ:

Այդ մարդիկը Կեսարացիներն են: Ահա թէ ի՛նչ խմորէ շինուած են:

Կեսարացին կը ծնի՝ զարգացնելու համար Փղշտացի, Սկովտիացի, Օվերնիացի իր նախնիքներուն ոսկեծղի քաղաքակրթութիւնը:

Կախարդ մըն է ան, որ գիտէ ամէն բան ոսկիի վերածելու գաղտնիքը: Մէկ բան միայն չէ կրցած ոսկիի վերածել՝ հայերէն լեզուն: Թերեւս, ատոր համար է, որ հայերէն չի խօսիր, հայերէն չի գիտեր: Թերեւս ալ, հայերէնը ինքնին ոսկեղինիկ լեզու մը ընդունելով, իր հրաշքը չէ ուզած փորձել:

Քար մը դրեք Ակնցիին ափը, ան այդ քարէն աղբիւր մը կը հանէ: Նոյն այդ քարը դրեք Վանեցիին ձեռքը՝ ան ալ քարէն իր հացը կը հանէ: Այդ քամուած քարը յանձնեցեք Կեսարացիին, ան կը բռնէ քարը, ու յանկարծ քարը ոսկի կը կտորի: